

# ՊԵՆՏԱԿՈՆՏԱՆԻՍՏԱՆԻՍՏՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՍՔ

Անհանգիստ մատներով խաղալով իր հագուստի հետ, լեյտենանտ Հեյվերսքէն իր պղտոր հայացքը շարված գինվորների գլուխների վրայով դեպի անորոշ հեռուն հառնելով, սկսեց. «Է... ես ուզում եմ... հըմ... ես ուզում եմ... մի բոլորով... զբաղեցնել ձեր ուշադրությունը: (Բաց է թողնում իր պլանշետը և ապա կրկին վերցնում է այն): Ըրը... մեր դասակը, յոթերորդ դասակը... գումարտակի հրամանատարի կողմից նետվում է մի բավականին դժվար խնդիր լուծելու: (Սկսում է պատեցնել ձեռքին բռնած կողմնացույցը): Ըհը... այսպիսով... ըրը... անիծյալ գերմանացին սարքել է... ոնց են ասում...հա, երկու պահակակետ... այնտեղ... բլրի լանջին (քիթն է մաքրում): Ըրը... մենք պետք է ... համենայն դեպս պետք է ձգտել խլել դրանցից մեկը...Ըրը.. Ութերորդ դասակը պետք է... ինչպես ասում են, մաքրի մյուսի հաշիվը: (Քորում է ձախ աչքը): Հանգիստ կանգնեցեք, Ջոնս, դուք շարքի մեջ եք: Սերժանտ, գրեցե՛ք. «Ջոնսը շարքում շարժվում է»: Այսպիսով, մենք բոլորս պարտավոր ենք, այսպես ասած, անել այն ամենը, ինչ կարող ենք... եթե դուք հասկացաք, թե ես ինչ նկատի ունեի: Ինձ թվում է, ես ամեն ինչ ասացի»:

Այս դասակից հարյուր քայլ հեռու կանգնած էր ձիգ և իր ուժերին վստահ լեյտենանտ Թանդերբոլտը: Նա նայում էր ուղիղ իր առջև կանգնած գինվորների աչքերին: «Ջինվորներ, - սկսեց նա, - գումարտակի հրամանատարը մեզ է ընտրել մի զվարճալի գործի համար: Այնտեղ, բլրի լանջին, հակառակորդը երկու պահակակետ է գրել: Եթե մենք նրան այնտեղից անմիջապես դուրս չըջենք, ապա նա մեզ շատ տհաճություններ կպատճառի: Մենք գրավե-

լու ենք այդ դիրքերից մեկը: Յոթերորդ դասակը կհոգա մյուսի մասին: Դուք գիտեք, թե դա ինչպես պետք է անել, չէ՞ որ մենք շատ ենք վարժվել դրանում: Կապրալ Մնիֆկինսը իր խմբով հակառակորդին կհարվածի նոնակներով: Շարքային Մալվանին իր խմբով նրանց կզբաղեցնի իր գնդացրով: Մյուսները կկտրեն նահանջի ճանապարհը: Նրանցից ոչ մեկը չպետք է ճողոպրի: Մի խոսքով, մի լավ ծեծ տանք դրանց և հոգիները հանենք: Դե՛հ, ուրեմն, հիանալի է: Կեցցե՛ք, բլենքշիրցիներ: Գնացի՛նք»:

Այդ դասակներից մեկը հաջողությամբ լուծեց իր առջև դրված խնդիրը, իսկ մյուսին դա չհաջողվեց: Դասակներից ո՞րը հաջողության հասավ: Ճիշտ պատասխանը գտնելու համար պարզև նշանակելու կարիք չկա:

Երբ Հեյվերսէքն ու Թանդերբոլտը դուրս էին գալիս գումարտակի շտաբից, նրանց առջև միևնույն նպատակն էր դրված՝ զինվորներին հայտնել իրենց առջև դրված խնդրի մասին: Չի կարելի կարծել, թե ամեն մի առաջադրանք կարող է ոգևորել զինվորներից յուրաքանչյուրին: Պահակակետեր վերցնելը շատ վտանգավոր գործ է, այդ գործողության մասնակիցները կարող են վիրավորվել կամ նույնիսկ գոհվել: Ինքնապահպանության բնագոյր շատ ուժեղ է, և անօգուտ է ձևացնելը, թե այն գոյություն չունի: Հեյվերսէքի մոտեցումը սկզբից ևեթ սխալ էր:

Նա չկարողացավ առաջիկա գործին նայել զինվորների տեսանկյունից:

Թանդերբոլտն, ընդհակառակը, ճիշտ սկսեց: Նա նույն մարտական հանձնարարությունն էր ստացել, ինչ և Հեյվերսէքը, բայց նա դեպի զինվորների սիրտը տանող ճիշտ ուղի գտավ հրամայելով, որ նրանք հակառակորդի «հոգին հանեն»: Դրա դեմ ութերորդ դասակը ոչ մի առարկություն չէր կարող ունենալ. հակառակորդի մարմնից հոգին դուրս շարտելն ավելի հաճելի է, քան սեփական շունը փչելը: Զինվորները շոյվեցին գումարտակի հրամանատարի կատարած ընտրությունից: «Նա, - մտածում էին զինվորները, - գիտե, թե ինչ է անում, երբ ընտրում է ութերորդ դասակը»: Նրանց հպարտությունը շոյված էր: Նրանք պատրաստ էին անել այն ամենը, ինչ իրենցից պահանջվում էր:

Հեյվերսէքի մեթոդը զինվորներին ինքնավստահություն չներշնչեց: Դատելով նրա անհանգիստ ձեռքերից կարող ենք ասել, որ նրա ինքնատիրապետումը բավարար չէր, իսկ ըստ նրա խառնաշփոթ ելույթի դժվար չէ կուհել, որ նա վատ գիտեր իրադրությունը, թեև կարող էր ավելի լավ իմանալ, քան թե Թանդերբոլտը: Բացի այդ, նա խուսափում էր նայել զինվորների աչքերին: Տպավորությունն այնպիսին էր, թե նա խնդրի լուծման որոշակի պլան դեռ չէր մշակել: Եվ, վերջապես, նա բծախնդրություն էր հանդես բերում զին-

վորների նկատմամբ հենց այն պահին, երբ անհրաժեշտ էր շարժման մեջ դնել նրանց նվիրվածությունն ու մարտական ոգին: Իր վարքով նա այն տպավորությունը ստեղծեց, որ թշնամու պահակակետերի գրավումը կարող է և չհաջողվել, դրանով իսկ զինվորներին վատթարագույն տագնապ ներշնչելով: Մի՞թե նման հանգամանքներում յոթերորդ դասակը կարող էր հաջողությամբ կատարել հրամանատարության առաջադրանքը:

Թանգերբոլտը կարողացավ ոգեշնչել զինվորներին: Նա կանգնած էր ուղիղ և նայում էր զինվորների աչքերին, նա նրանց ուշադրությունը չէր շեղում իր հանդերձանքի հետ խաղալով: Նրա համառոտ ու աշխույժ խոսքը վկայում էր այն մասին, որ հստակորեն պատկերացնում էր իր առջև դրված խնդիրը: Նա զինվորներին տեղյակ պահեց, թե ինչ պլանով պետք է գործել, որի շնորհիվ հանձնարարությունը դարձավ ոչ միայն իր, այլև մյուսների գործը: Այն պետք է ավարտվեր հաջողությամբ, քանի որ, մինչև ութերորդ դասակի կողմից գործողությունը սկսելը «ամեն ինչ արդեն որոշված էր»: Ինչպե՞ս կարող էին դասակի զինվորները չկատարել նման առաջադրանքը:

Դրանից կարելի է որոշակի եզրակացություններ կատարել:

1. Որպեսզի հնարավոր լինի ոգեշնչել զինվորներին և մղել մարտական առաջադրանքի հաջող կատարման, նրանց առջև այնպիսի նպատակ պետք է դնել, որին հեճոց իրենք են ցանկանում հասնել:

2. Վստահություն ներշնչելու համար ելույթ ունեցողը պետք է կանգնի ուղիղ, շտկի ուսերը և նայի իր ունկնդիրների աչքերին:

3. Մինչև խոսել սկսելը նա պետք է իմանա, թե ինչ պետք է ասել այդ մարդկանց:

4. Թող նա հարց տա ինքն իրեն. «Ինչո՞ւ եմ ես ելույթ ունենում»: Եթե նա այդ հարցին չի կարող պատասխանել, ապա ելույթ ունենալը իմաստ չունի: Յուրաքանչյուր ճառ պետք է որոշակի նպատակ ունենա:

5. Ձի կարելի սեթևեթեղ. դա շեղում է ունկնդիրների ուշադրությունը:

6. Անհրաժեշտ է դիմել ունկնդիրների ոչ թե բացասական, այլ դրական զգացմունքներին:

7. Խոսքը պետք է լինի համառոտ, գրավիչ և համոզիչ:

8. Պետք է կարողանալ ժամանակին կանգ առնել: Տպավորիչ ելույթն անգամ իզուր կանցնի, եթե երկարաձգվի թեկուզ մեկ րոպեով: Հոետորական արվեստի բնագավառի այնպիսի մի հեղինակություն, ինչպիսին Ալբերտ Զ. Բեվերիջն էր, գրել է. «Ոչ մի ասույթ չի կարող անմահ համարվել, եթե նրանում կան այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են հետևյալները. «Գուցե և ես սխալվում եմ», կամ. «Իմ համեստ կարծիքով», կամ. «Որքան ես կարող եմ դատել»: Մեծ հոետորները միշտ այնքան վստահ են լինում իրենց ու-

ժերին, որ նրանց ելույթների վերջին մասը հնչում է որպես անժխտելի ճշմարտություն: Նրանք «իրենց գործը գիտեն», իսկ հասարակ մարդիկ հաճույքով են լսում նրանց:

Սեփական անհատականությունը զարգացնելու և ուրիշների վրա ազդեցություն գործելու համար մարդու խոսքը պետք է լինի անկաշկանդ ու համոզիչ: Ձինվորները գնում են այն մարդու հետևից, ով կարողանում է խոսել, այլ ոչ թե նրա, ով ձկան նման համր է: Ճիշտ են վարվում այն հրամանատարները, ովքեր շաբաթը մեկ անգամ հավաքում են իրենց ենթակա հրամանատարներին և ստիպում են խոսել: Լողալ սովորելու միայն մեկ եղանակ գոյություն ունի՝ պետք է նետվել ջուրն ու սկսել լողալ: Եվ կա խոսել սովորելու միայն մեկ եղանակ. պետք է ոտքի կանգնել ու խոսել: Հստակորակ արվեստը ձեռք է բերվում գործի մեջ:

Հրամանատարը կարող է նաև այլ ազդեցիկ մեթոդ օգտագործել. նա կարող է սպաներից յուրաքանչյուրին հարցնել օրակարգի որևէ կետի վերաբերյալ նրա կարծիքը: Սկզբում երիտասարդ սպաներից շատերը նյարդայնանում են՝ սահմանափակվելով իրենց համաձայնությունը հայտնելով մայր Հոովիտցերի կամ կապիտան Բլանդերբասի հետ: Բայց ժամանակի ընթացքում նրանք սկսում են հասկանալ, որ սեփական կարծիքը հայտնելն ավելի հեշտ է, քան թե ամբողջ կյանքում ուրիշների կարծիքներն ընդունելը: Հենց որ նորեկը առաջին հաջողություններն է ունենում, նրա նյարդայնությունն անցնում է, և տափնապին փոխարինելու է գալիս ինքնավստահությունը:

Ձինվորները վստահում են նրանց, ովքեր ինքնավստահ են: Անմտություն կլինեք սպասել, թե նրանք կարող են հավատալ մշտապես տատանվող մարդուն: Հնարավոր չէ առանց սեփական անձը բացահայտելու շփվել զինվորների հետ: Ձեր գիտելիքներն ու հակումները, ձեր մտավոր ընդունակությունները, ձեր անհատականությունը՝ այս ամենը տեսանելի է: Խելացի մարդը ձգտում է իրեն լավագույն ձևով դրսևորել: